

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի 02.04.2017թ. թիվ 293 Լ/Կ հրամանի

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՄԱՐԴԿԱՑԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 3 27.04.2017թ.

Վանաձոր

2017թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. Սույն փաստաթղթով սահմանվում են «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) մարդկային ռեսուրսների կառավարման հիմնական սկզբունքները, նպատակները, խնդիրները, մեթոդները:
2. Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունը համահունչ է Համալսարանի 2014-2018 թթ. զարգացման հայեցակարգի 2.6. կետի նպատակներին:
3. Մարդկային ռեսուրսների կառավարումը աշխատանքային միջավայրում ռազմավարական և հետևողական մոտեցում է Համալսարանի առավել արժեքավոր կապիտալի՝ մարդկանց կառավարման նկատմամբ, ովքեր աշխատում են Համալսարանում՝ անհատապես և կոլեկտիվ՝ նպաստելով Համալսարանի նպատակների իրականացմանը:

II. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

4. Մարդկային ռեսուրսների կառավարման սկզբունքներն են.
 - 4.1. Միասնական և կոլեգիալ կառավարում.
 - 4.2. Գիտական հիմնավորվածության ապահովում.
 - 4.3. Համակարգայնություն.
 - 4.4. Պլանավորում.
 - 4.5. Իրավունքների և պարտականությունների համակցություն.
 - 4.6. Աշխատանքի խրախուսում, խթանում.
 - 4.7. Դրդապատճառների ստեղծում.
 - 4.8. Վերահսկում և պատասխանատվություն.
 - 4.9. Արդյունավետության գնահատում.
 - 4.10. Սոցիալական արդարության ապահովում:
5. Մարդկային ռեսուրսների կառավարման մեթոդներն են.
 - 5.1. Կազմակերպավարչարարական՝ պայմանավորված իրավական ակտերի կիրառությամբ.
 - 5.2. Տնտեսական՝ պայմանավորված տնտեսական գործոններով.
 - 5.3. Սոցիալ-հոգեբանական՝ պայմանավորված աշխատողների սոցիալական ներգրավմամբ և աշխատանքի արդյունավետության բարձրացմամբ:

III. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Մարդկային ռեսուրսների կառավարման հիմնական նպատակները և խնդիրներն են՝

- 6.1. մարդկային ռեսուրսների պլանավորում և սերնդափոխության հաշվառում,
- 6.2. պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում,
- 6.3. մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ծրագրերի միջոցով գիտամանկավարժական կադրերի պատրաստում,
- 6.4. պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձերի տարակարգային որոշակի տարբերակում, որը կխթանի գիտության զարգացումը,
- 6.5. կառավարման համակարգում իրավական դաշտի շարունակական կատարելագործում և կանոնակարգում,
- 6.6. պրոֆեսորադասախոսական անձնակազմի երիտասարդացում՝ սերնդափոխության և մասնագիտական որակի ապահովման նկատառումներով,
- 6.7. աշխատանքային հաջողությունների խթանման և խրախուսման միջոցների ապահովում,
- 6.8. մարդկային ռեսուրսների մասնագիտական որակավորման շարունակական բարձրացման ապահովում,
- 6.9. պարտականությունների և իրավունքների հստակ բաշխում:

IV. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Համալսարանի աշխատակիցները բաժանվում են հետևյալ տարակարգերի.
 - 7.1. Ակադեմիական անձնակազմ (պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս).
 - 7.2. վարչատնտեսական անձնակազմ.
 - 7.3. ուսումնաօժանդակ անձնակազմ:
8. Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի գործառույթներն են.
 - 8.1. անձնակազմի ռազմավարական պլանավորում,
 - 8.2. անձնակազմի հավաքագրում և հարմարեցում (ադապտացում),
 - 8.3. անձնակազմի աշխատանքի արդյունավետության գնահատում,
 - 8.4. անձնակազմի վերապատրաստում և զարգացում,
 - 8.5. կարիերայի պլանավորում,
 - 8.6. ներքին աշխատանքային հարաբերությունների կարգավորում,
 - 8.7. անվտանգության ապահովում,
 - 8.8. աշխատանքային գործընթացների նախագծում և վերլուծություն,
 - 8.9. աշխատանքային խմբերի կազմում,
 - 8.10. աշխատանքի նկարագրություն,
 - 8.11. աշխատանքային փաստաթղթերի կազմում,
 - 8.12. աշխատանքային արդյունավետության առանցքային ցուցանիշների կազմում:

V. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

9. Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության իրականացման և արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը և տարեկան հաշվետվությունը ներկայացվում է Համալսարանի ռեկտորին և գիտական խորհրդին:

VI. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

10. Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ՝ ստորաբաժանման ղեկավարի ներկայացմամբ: